



«Կյանքում իմ սկզբունքը՝ սիրել ու սիրվել, լինել կարգապահ ու պարտաճանաչ: Ես ինքս այդպիսին եմ ու պահանջում եմ դիմացինից»: Հենց սա է նրա կյանքի կարգախոսը, որով ապրում է ու սերունդներ դաստիարակում: Ուղիղ 31 տարի նույն դպրոցում ու մանկավարժի աշխատանքում: Խանում Անդրանիկի Օխոյան՝ ծնվել է 1963թ-ին մայիսի 27-ին Կանաձորում: 1965թ-ին ընտանիքով տեղափոխվել են Աբովյան: Միջնակարգ կրթությունը ստացել է Աբովյանի թիվ 1 դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո մեկ տարի անց ընդունվում է Երևանի Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմաաշխարհագրական ֆակուլտետը: Բարձրագույն կրթություն ստանալուց հետո՝ 1985-ին նշանակվում է աշխատանքի Բյուրեղավանի թիվ 1 դպրոցում: Այդ օրվանից մինչ այսօր աշխարհագրություն է դասավանդում հենց այս՝ Բյուրեղավանի ավագ դպրոցում, վերջին տարիներին նաև հայ եկեղեցու պատմություն: 1987թ-ին ամուսնացել է իր գործընկեր, ֆիզկուլտուրայի ուսուցիչ Էդուարդ Իգնատյանի հետ: Ունի 3 երեխա և 1 թոռնիկ: 2010-2015թթ ՀՀ ԿԳ նախարարության և գերմանական giz կազմակերպության կողմից կազմակերպվել էր մրցույթ՝ բնապահպանական ծրագրերի շրջանակներում, որին 5 տարի անընդմեջ մասնակցում և Բյուրեղավանի ավագ դպրոցն է ներկայացնում տիկին Օխոյանը: 2015-ին՝ այդ մրցույթում լավագույնս ներկայանալու համար արժանանում է մրցանակի ու պատվոգրի: Այս տարի ուսուցչի տոնին Խանում Օխոյանը գնահատվում է նաև Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի կողմից: Երկարամյա մանկավարժական գործունեության և համայնքի հասարակական կյանքին ակտիվ մասնակցության համար արժանանում է շնորհակալագրի: Նվիրված լինելով իր աշխատանքին՝ ջանք ու եռանդ չի խնայում երեխաների մեջ հետաքրքրություն, սեր առաջացնելու դեպի աշխարհագրությունն ու հայ եկեղեցու պատմությունը: Դա է վկայում նրա սցենարով նկարահանված ֆիլմը՝ «Հիշում եմ և պահանջում»՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին:

**Byureghavan. am**- Մանկավարժի աշխատանքն ուղղակի աշխատա՞նք է Ձեզ համար, թե Աստծո կողմից տված պարգև:

□. □□□□□□- **Գիտեք**, որպես մասնագիտություն ես չեմ ընտրել մանկավարժությունը, ես ընտրել եմ աշխարհագրություն առարկան: Պրակտիկայի ընթացքում, որն անցկացրել եմ Երևանի թիվ 120 դպրոցում, շփվելով երեխաների հետ հասկացա, որ մանկավարժությունն իմն է: Այդ ժամանակ իմ առջև խնդիր էի դրել. եթե ստացվի պրակտիկաս կշարունակեմ

մանկավարժի գործունեությունս, եթե ոչ, ուրեմն կգբաղվեմ այլ գործով: Բարեբախտաբար, ինձ մոտ հաջող ստացվեց և ես որոշեցի շարունակել: Երկի Աստծու կողմից տրված պարգև էր...

**Byureghavan. am-** Տիկին Օխոյան, երբ առաջին անգամ ոտք դրեցիք դպրոց, դասարան, ի՞նչ զգացողություններ ունեցաք: Համոզվա՞ծ էիք, որ ճանապարհը դժվարություններով լի է:

□. □□□□□□- Ընդհանրապես մանկավարժությունը գեներով է անցնում: Մեր ընտանիքում ուսուցիչ չի եղել և ես չեմ պատկերացրել, որ այսպես կսիրահարվեմ այս մասնագիտությանը: Երբ դասարան եմ մտնում, կարծես մի ուրիշ աշխարհում լինեմ: Հիմա, երբ հետադարձ հայացք եմ գցում, հասկանում եմ՝ ինձ համար այդ ճանապարհը դժվարին չի եղել, քանի որ սիրով եմ անցել: Ամեն տարի վերջին զանգին, հպարտության մեծ զգացողություն եմ ունենում, տխրում ու ուրախանում, որ կարողացել եմ ինչ-որ բան տալ իմ սաներին: Նրանք դա հետո են զգում ու գնահատում:

**Byureghavan. am-** Դասարաններ մտնելիս միշտ նույն տրամադրությամբ եք մտնում, թե յուրաքանչյուր դասարանում տարբեր է:

□. □□□□□□ - (Ժպտում է ու շարունակում) Շատ տարբեր է, մեզ ասում են օրվա պլան գրեք, ես դա չեմ ընդունում, որովհետև համարում եմ ձևական թղթաբանություն: Նույն թեման տարբեր դասարաններում տարբեր եմ ներկայացնում: Օրինակ՝ հայ եկեղեցու պատմության ժամին աշակերտը կարող է այնպիսի հարցադրում անել, որ դասապրոցեսում ուրիշ մթնոլորտ ստեղծվի: Հնարավոր է այդ օրն իմ առարկան չդասավանդեմ, եթե զգամ, որ իմ աշակերտի մոտ հուզական պահ կա: Հաշվի առնելով այդ փաստը, ես դասաժամը կվերածեմ դաստիարակչական բնույթի: Սովորեցնում եմ առաջին հերթին մարդ մեծանալ, հարգանքով վերաբերեն շրջապատին: Միգուցե, այստեղ էլ Աստծո մատը խառն է, որ դասավանդում եմ հայ եկեղեցու պատմություն: Առաջին հերթին երեխան մարդասեր պիտի լինի: Դրա համար մենք պետք է սիրենք մեր մասնագիտությունը, հնարավոր է լավ մասնագետ լինես, բայց վատ մանկավարժ: Երեխան եթե չսիրեց ուսուցչին, չի սիրի նաև առարկան: Ուսուցչի գնահատականն ի վերջո տալիս է աշակերտը և ծնողը:

**Byureghavan. am-** Ձեր դասապրոցեսն ինչպե՞ս է ընթանում:

□. □□□□□□- Իմ առարկան՝ աշխարհագրությունը, չոր ու ցամաք չի լինում դասավանդել:

Ավելի լավ է աշակերտը մեկ անգամ տեսնի, քան մի քանի անգամ լսի: Ես շրջագայել շատ եմ սիրում և իմ դասերը հիմնականում այդպես եմ անցկացնում: Այդպես երեխան թեման չի մոռանում, իսկ զուտ դասագրքայինը սովորում են, հետո մոռանում: Պետք է համատեղել:

**Byureghavan. am-** Եթե հնարավոր լիներ կյանքը նորից սկսելու արդյո՞ք դուք կընտրեիք մանկավարժությունը:

0. 000000-Առանց երկմտելու, վստահեցնում եմ, որ անպայման կընտրեի մանկավարժի մասնագիտությունը: